ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 04 » հոկտեմբերի 2018 թվականի N: 307-Ա ք.Գյումրի

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ սահմանված ծառայողական քննություն անցկացնելու կարգի 7-րդ, 8-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2018 թվականի հոկտեմբերի 3-ի և անձնակազմի կառավարման բաժնի պետի 2018 թվականի հոկտեմբերի 2-ի զեկուցագրերը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի առաջատար մասնագետի թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող Արկադի Դանիելյանի կողմից աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքով նշանակել ծառայողական քննություն՝ պարզաբանելու նրա գործողություններում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային կարգապահական ներքին կանոնների խախտման առկայության հարցը:
2. Ծառայողական քննությունն անցկացնել միանձնյա եղանակով և վարող նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Գեղամ Բաղդասարյանին:
3. Ծառայողական քննությունն անցկացնել 2018 թվականի հոկտեմբերի 5-ին և ավարտել 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Կ.ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է